ինձ գանձ անկողոպտելի և փրկանս մեղուցեալ հոգւոյ իմոյ... բայց արդ զրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և սուտ անուն և փըցուն և անարհեստ զրչի Թադէոս սուտ անուն սարկաւագի, ի լաւ և յընտիր օրինակէ. ի սահմանս սուրբ քաղաքիս Երուսաղեմի և հռչակաւոր անապատս ի վանս Սրբոյն Սաբայի ընդ հովանեաւ սրբոց որ անդ են հանգուցեալ։ Դարձեալ աղաչեմ զձեզ զի յիշեսջիք զհոգևոր եղբայրն իմ զՑովհաննէս որ զթուղթն կոկեաց և զՄարկոս միայնակեացն եւ զմիաբանս Սբ. Փրկչիս։ Դարձեալ ծանեարուք, ով սբ. եղբարք. որ տուաք յիշատակ հոգւոց մերոց զսբ. աւետարանս հոգևոր որդւոյ մերոյ եւ աշակերտին իմոյ տէր Աբրահամ դեռաբուսիկ քահանային Մըսըրցւոյ, Ա.Ծ. օրհնէ զինքը և զիւր որդիքն, զի բազում անգամ աշխատեցաւ հետ ի մեզ ի մարմնաւոր պիտոյիցս ծառայութիւն անելով։ Ծանեարուք, ո՞վ սուրբ եղբարք. վկայութեամբ Աբրահամ վրդ.ին և տէր Տաւնականին և տէր Սաղաւմոնին և տէր Հայրապետին որ տուաք զսբ. աւետարանս յիշատակ հոգւոց մերոց տէր Աբրահամին, եթէ ոք կամիցի ի դմանէ դաւ հանելով կամ գողանալ, զմասն Ցուդայի առցէ և զխաչահանուացն Թվին Հայոց Զի» (=1471)։ Այս յիշատակարանը կը հաստատէ Ցունաց Ս. Սաբայի վանքին մէջ հայ միաբանութեան մը գոյութիւնը, որ տևած է մինչև ԺԸ. դար։ Երուսաղէմացի Հանեն պատմագիրն ալ կը վկայէ գրելով. Եւ ազգս մեր ունին ի սնա մասն մի վիճակ. (էջ 279)։ Հաւանաբար միևնոյն Թադէոսն է որ Ս.Փրկչի վանքին մէջ, ՊՂԸ (=1449) թուին, կ'ընդօրինակէ Գանձ գիրք մը և կը նուիրէ Ս. Հրեշտակապետի վանքին։ Սոյնին յիշատակարանին մէջ ալ կը յիշէ թուղթը կոկող իր հոգևոր եղբայրը՝ Ցովհաննէս։ (Տե՛ս նաև մեր յօդուածը Սիոնի մէջ, 1927, էջ 369-372. 1928, էջ 16-19)։

ԹԱԴԷՈՍ ՎՐԴ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱՐԱԲԿԻՐՑԻ. — Մբ. Ծ. 1831, Զռ. 1866 ին, հիւրընկալ 1866-70 ին, մասակարար 1870-73 ին, Տէր. 1873-1905 ին, ԼՍՊ. 1906 ին, և կը վախճանի նոյն տարին։ Եօթնամեայ աշխատութեամբ յօրինած է Համաքարտաս Հին եւ Նոր Կտակարանաց գիրքը. (տպ. Ս. Երուսաղէմ, 1895)։ Թողած է ի նպաստ վանքին տասը հատ Ռումելի Երկաթուղիի արժեթուղթեր։